

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՈ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
Ն. ՅԱ. ՄԱՐԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍԻՏՈՒՏ


ՎԱՐԱԴ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ՓԱՎԱՏՈՍ ԲՈՒԶԱՆԴԻ ԱՃԽԱՐՀԱԲԱՐ
ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Առանձնատիպ «Աշխատությունների ժողովածուի»
III հատորից, 1948 թ.

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՈ ԳԱ. ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ

1948



ՎԱՐՍԳ ԱՌԱՋԵԼՅԱՆ

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՓՈՎԱՏՈՍ ԲՈՒԶԱՆԴԻ ԱՇԽԱՐՀԱԲՈՐ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Փավստոս Բուզանդի, Հայոց պատմություն. քարգմանուրյուն, ներածուրյուն և
ժանոբուրյուններ ակադեմիկոս Ստեփան Մալխանյանցի.

Հայպետհրատ, Երևան, 1947 թիվ

Փավստոս Բուզանդի պատմությունը մեր անցյալի գրականության շատ նշանավոր հիշատակարաններից մեկն է, որը տմենայն իրավամբ 19 և 20-րդ դարերի հայ բանասիրության լուրջ ուշադիրությանն է արժանացել։ Այդ հետաքրքրականությունը դեպի Փավստոս Բուզանդի «Հայոց պատմությունը» ունի 3 հիմնական պատճառներ։

1. Որ 4-րդ դարի հայոց պատմության համար չկա մեր այլ հիշատակարան, բայց Բուզանդի այս գրքից, որ ոչ միայն ներկայացնում է մեր ժողովրդի քաղաքական և կրոնական կյանքի պատմությունը, այլև ներքին կյանքի, տնտեսական որոշ հարաբերությունների, կենցաղի, որ մեր պատմագրության մեջ այնքան խիստ պակասավոր է։

2. Մյուս հիմնական պատճառը այն է, որ Բուզանդի պատմությունը հիմնված է մասամբ ժողովրդական բանավոր զբույցների, սերնդից սերունդ անցած առասպելախառն պատմությունների վրա, որպիսի պատմությունը համեմատած մեր մյուս պատմագիրների չոր ու ցամաք հիշատակարանների հետ, անշուշտ, գոնե եթե ոչ պատմական տեսակետից, այլ ժողովրդական, բանահյուսական, առասպելաբանության, ժողովուրդների հասկացողությունների և ըմբռնումների, նրանց ներքին կյանքի մեկնաբանման ու բացատրման համար գերակշիռ արժեք ու առավելություն է ներկայացնում, եթե չասենք, որ Բուզանդի «Պատմությունը» որպիս պատմական հիշատակարան էլ շատ կարևոր է և որ աղբյուր է ծառայել հետագա բաղմաթիվ պատմիչների համար։

3. Հետաքրքրականություն շարժող Յ-րդ պատճառը Բուզանդի լեզուն է, որը, համապատասխան յուր նյութին, յուրահատուկ նշանակություն ունի մեր ժողովրդական բարբառների, մեր աշխարհաբար լեզուների պատմության ու նրանց դարձացման ուսումնասիրության համար։ Հարուստ ոչ միայն ժողովրդական ոճերով ու դարձվածքներով, այլև ժողովրդական բառերով, կյական դիպուկ բարդություններով, մեր գյուղացու բառերով ու խոսքաշինությամբ և նրա աղատ ու անկաշկանդ շարահյուսությամբ, որտեղ բակառությունները, զեղչումները (էլիպսիս), անհետենողականությունները (անակոլուֆ), պերիֆրազին դարձվածքները հետեւմ են միմյանց աղատ, անկաշկանդ, զերծ գրքայնությունից, կաղապարված շարլոնիդմից։ Ատանդարտ արտահայտություններից։ Ինչպես յուր նյութի շարադրման մեջ հեղինակը արհամարհել է կեղծ բարեպաշտությունը ու շարադրի է այնպես, որպես մտածել կամ լսել ու կարդացել այս կամ այն մարդու ժաման (Պապ, Հովհաննեպիտոպոս, Արշակ, Տիրիթ), այնպես էլ յուր լեզվի նկատմամբ եղել է աղատ՝ առանց հաշվի առնելու տիրող գրական ճաշակն ու ոճը, քերականությունն ու կանոնները։

Այս «Պատմության» գրքի հեղինակը ուրիշ ոչ ոք չէ, եթե ոչ մի հայ գրադետ գյուղացի, ուշիմ, պատմություններ, զրույցներ սիրող, հավաքող ու մտքում պահող մի հայ մարդ, որ այնքան է բարձրացել իր միջավայրից, մինչև որ հասել է հայոց պատմություն գրելու բարձր գիտակցությանը։ Մրան անշուշտ շատ մեծ խթան է ծառայել գրական այն մեծ շարժումը, որ առաջ էր եկել 5-րդ դարի Հայաստանում շնորհիվ հանճարեղ Մեսրոպի ու Սահակի։

Անցյալի բանասիրությունը բազմաթիվ տարրեր ու իրարամերժ կարծիքներ է հայտնի «Բուղանդարան» գրքի ու նրա հեղինակի վերաբերյալ։ այդ կարծիքները, ինչպես ասացինք, ծայրահեղորեն իրար հակառակ են և ժիստող։ Բոլոր կարծիքները համառոտ կերպով բերված են մեր գրախոսության նյութ դարձող Բուղանդի ներկա աշխարհաբար թարգմանության առաջարանում, և տրված է նրանց քննադատությունը տաղանդավոր գիտնական բանասեր հանգուցյալ Ստեփան Մալխասոյանցի կողմից։ Ուսումնասիրելով Բուղանդի մասին եղած բավականաշատ գրքերն ու հողվածները, մենք գալիս ենք այն եղրակացության,

որ Բուղանդի գրքի ու հեղինակի վերաբերյալ ամենաաճիշտ ու իրական մոտեցում հանդես է բերել ներկա հրատարակության թարգմանիչ հանգուցյալ ակադեմիկոսը։ ՚Իեռ սրանից 52 տարի առաջ Ստ. Մալխասյանցը հրատարակեց մի ուսումնասիրություն¹, որտեղ նա, հակառակ իրենից առաջ բոլոր բանասերների և գիտնականների, հանգեց հետեւյալ միանդամայն ճիշտ եղբակացութան, ինարկե նախօրոք յուր դրույթները մանրամասն փառաբերով։

Հաստ Մալխասյանցի տեսակետի «Բուղանդարանի» հեղինակը 4-րդ գրքի Գ, 5-րդ գրքի Ի՞ֆ և 6-րդ գրքի Ե, Զ գլուխներում հիշատակված Փալստոս եպիսկոպոսը չէ։ Ուստի նա հույն չէ։ Այս համար հանգուցյալ գիտնականը հակադրվում է մի շարք բանասերների, որոնք հիմնվելով երբորդ դպրության վերջաբանի վրա, որտեղ գրված է. «Կանոնք փախստեայք (ուրիշները ուղղում են Փալստեայք) Բուղանդեայ ժամանակիր մեծի պատմագրի, որ էր ժամանակագիր Յունաց։ Իրավացիորեն ժըխտվում է այս վերջաբանի իսկությունը, որը կարող էր հետազոտում ավելացվել շնորհիվ այն բանի, որ գիրքը կոչվում է «Բուղանդարան պատմութիւնք»։ Նախ այստեղ հիշենք, որ մեր Մատենադարանի մի ձեռագիր (№ 3079), որ շատ ուշ շրջանի գրչություն է, բայց որ ըստ երեսույթին արտագրված է ավելի հին մի ձեռագրից, տալիս է ուրիշ ընթերցվածք վերեսում ընդգծված նախադասության։ «Որ էր ժամանակին Յունաց։ Եթե այս համարենք նույնիսկ սխալ ընթերցվածք, դարձյալ կասկածելի է մնում սփախստեայք» բառը, որ մեր հիշած գրչագրում գրված է «սփախստեայք», այսինքն այն, որ գրքի հեղինակի անունը նման ձեռվշեր կարող աղավաղվել և տարբեր ձեռագրերում տարբեր գրություններ ստացվել։ Հետո մի ուրիշ հանգամանք էլ կա, որին պետք է ուշադրություն դարձնել։ Հանգուցյալ գիտնականը հնապետք է ուշադրություն դարձնել։ Զանգուցյալ գիտնականը մեթագրում է, թե վերջաբանության մեջ հիշված «Փալստոս Բուղանդը անունը գրվել է շնորհիվ այն բանի, որ գրքի վերնագիրն այդպես է եղել։ Զարմանալին այն է, որ մեր բանասերներն այդքան մանրամասն դրաղվել են Բուղանդի հարցով, բայց ոչ մեկը, բացառյալ Նորայր Բյուղանդացուց, որի ձեռքի տակ միայն մի ձեռագիր է եղել, ձեռագիրների ուսումնասիրությամբ չեն մի ձեռագիր է եղել, ձեռագիրների ուսումնասիրությամբ չեն զբաղվել։ Մեր ձեռքի տակ գտնվող երեք ձեռագիրները բոլորովին զբաղվել։

1. «Ուսումնասիրություն Փալստոս Բյուղանդի պատմության», 1896թիվ.
Վիեննա:

«Փաւստոս» բառը չեն հիշատակում ոչ զրքի սկզբում և ոչ էլ որևէ դպրության զիխում, բացի վերեւում բերված աղավաղյալ «փախստեայք», «փոխստեայք» ձեերից, որ առանց կասկածի ընագրի հետ ոչ մի առնչություն չունեն.

Էլ ավելին. զրքի սկզբում, այսինքն երրորդ դպրություն համարված զլխում, չկա նաև «Բուզանդ» բառը. Մեր հիշած № 3079 ձնուագրում, որ մեծ տարբերություններ է տալիս մինչև այժմ հայտնի ֆավստոսի ընաղըի համեմատությամբ, ոկուլում է այսպես. «Բուզանդարան պատմութիւնք նախագիտելի է» առանց «խոստաբանութիւն» բառի. այս նախարանի վերնագրից հետո զալիս է ցանկը և ապա «Բուզանդարան պատմութիւնք, երբորդ դպրութիւն». «ի սկիզբն» բառը ջնջված: Ինչպես տեսնում ենք, թե նախարանի և թե առաջին մասի վերնագիրները չունեն «Բուզանդ» բառը ևս:

Ավելի հետաքրքրական ընթերցվածք ենք ուտնում երեսորդ մասի սկզբում, որ անմիջապես հաջորդում է առաջին մասի (3-րդ դպրութիւն) վերջաբանին. «Երրորդ դպրութիւն Բուզանդեայ չորրորդ խոստաբանութիւն» և ապա այնպիս, որպես ընադրում: Մրանից պարզ երևում է, որ Բուզանդի չորրորդ դպրութիւնը նույնպես համարվում է երրորդ դպրություն, իսկ ըստն 4-րդ դպրություն համարվածը կոչվում է՝ «4-րդ խոստաբանութիւն»:

Մենք այս կհամարեինք սխալ գրչություն կամ թյուրիմացություն, եթե Բուզանդի 6-րդ դպրություն համարվածը չկոչվեր «6-րդ խոստաբանութիւն» առանց «դպրութիւն» բառի: Միայն 5-րդ դպրություն համարվածը ունի «դպրութիւն 5-րդ» վերնագիրը, սակայն առանց «Բուզանդարան պատմութիւնք» ընդհանուր վերնագրի: Այս ամենը ցույց են տալիս, որ նախապես 4-րդ, 5-րդ և 6-րդ մասերը չեն կոչվել դպրություններ, այլ կոչվել են «խոստաբանութիւն», իսկ ամբողջ Բուզանդը կոչվել է «3-րդ դպրութիւն», հավանորեն, ինչպես ենթադրում է Նորայր Բյուզանդացին, մի «Բուզանդարան» կոչվող ժողովածուի 3-րդ գիրքը, որից էլ հնարվել է «Բուզանդ» անունը դեռ Դաղար Փարակեցու ժամանակ: Գուցե սրան հիմք կարող է ծառայել նաև այն հանգամանքը. որ մեր ձեռագիրներից մի ուրիշ «Բուզանդարան» բառի դիմաց ունի «Բուզանդական» բառը: Եվ որ այդ անունը հնարովի է, երեւում է նաև Փարակեցու խոսքերից, որ նա բերում է որպես բանավոր խոսք՝ ուրիշներից լսած

լինելով. քանի որ, ինչպես վերևում հիշատակեցինք, սկիզբը չռւնի հեղինակի անուն, միայն հաջորդ մասերը ունեն «Բուղանդ» անունը միշտ «Բուղանդեայ» սեռականի ձևով, որ անկասկածուրեն կամ ավանդաբար է մտցված, թեկուղ Փարակեցու հիշատակության հիման վրա, կամ հանված է «Բուղանդարան» կամ «Բուղանդական» բառերից, որը, ինչպես ճիշտ մեկնաբանում է հանդուցյալ ակադեմիկոսը, նշանակում է պատմություն, որովհետև գիրքը «Բուղանդարան» բառի հետ միշտ հիշատակում է պատմութիւն կամ պատմութիւնք բառը. Եթե ընդունենք, որ բառի ծագումը այդ չէ, համենայն դեպքում այդ երկու բառերի միշտ իրար հետ գործածությունը թույլ է տալիս կարծելու, որ գրանք հոմանիշ բառեր են, կամ մի ընդհանուր վերնագիր է, եթե ճշտվի, որ ուղիղը ոչ թե «Բուղանդարան» բառն է, այլ «Բուղանդական»:

Եթե պատմության գրքի վրա լիներ «Փաւստոս կոմ «Բուղանդացի» բառերը, որ երբեք չի պատահում, ապա Փարակեցին, որ անցել է՝ «ընդ բազում ճառս մատենից առաջնոցն պատմագրացն Հայոց», չէր ասի. «Որում երկրորդ զրոցն անուանեն զոմն պատմագիր՝ կոչեցեալ Փաւստոս Բուղանդացի»:

Նրա ձեռքի տակ եղել է «Բուղանդարան պատմութիւնք»-ը. բնականորեն նա հետաքրքրվել է, թե ով է արդյոք գրքի հեղինակը, և, լսելով այդ մասին՝ տվել է յուր մեկնությունը «Փաւստոս Բուղանդացի» հեղինակ լինելու խնդրի վերաբերյալ: Պնդում ենք, որ Փարակեցու ժամանակ գրքի վրա հեղինակի անուն չի եղել, և որ «Բուղանդարան» բառը ոչ ոք կապ չունի՝ Բիւղանդիոս, Բիւղանդիա կամ Բիւղաս անունների հետ, որովհետև ոչ մի ձեռագրում չենք պատահում «Բիւզ» ձեին, այլ միշտ «Բիւզ»: Մենք այստեղ կարող ենք համարձակորեն ասել (առայժմ առանց զրավոր հաստատության), որ թե հիշյալ վերնագիրները, թե առաջին մասի նախարանը և գուցե նաև ցանկերը հետագայում են կազմված և կապ չունեն բնագրի հետ:

Շարունակելով մեր խոսքը, ասենք, որ Ստ. Մալխասյանցը ժխտում է նաև Բուղանդի հույն լինելը ու այն պնդումը, թե Բուղանդի գիրքը գրվել է 4-րդ դարում, որով և նրա հակառակողները ջանում են ապացուցել իրենց զրույթները: Այստեղ կորդները ջանում են ապացուցել իրենց զրույթները: Էլ Մալխասյանցը ամենայն իրավունքով, փաստարկումների էլ Մալխասյանցը ամենայն իրավունքով, փաստարկումների ուժեղ տրամադրանությամբ, համոզիչ տվյալներով հաստատում է, որ Փավստոսի գիրքը գրվել է 5-րդ դարում, և որ նրա ընագիրը

Հայերեն է: Հիշյալ բոլոր փաստարկումները նա հիմնավորում է պատմական տվյալներով, դռւգադրություններով, լեզվական օրինակներով, որոնք կասկածի տեղ չեն թողնում, և որոնք, ի պատիվ հեղինակի, հետագայի բոլոր բանասերները, ներառյալ Արեղյան, Լեռ, համարում են միակ ընդունելին և ճիշտը, չհաշվելով Փավստոսի առաջին երկու դպրությունների հարցը, որը Արեղյանը յուր «Հայոց հին գրականության պատմություն» գրքի առաջին հատորի երրորդ հավելվածում (Էջ 588) աշխատում է կասկածի տակ առնել և առացուցել, որ Փավստոսի գիրքը նախապես ունեցել է նաև 1-ին և 2-րդ դպրությունները ևս, որոնք կորել են, և որ Մալխասյանցի այն պնդումը, թե Փարպեցին ըստ զրելոցն ի պատմութեան երկրորդումն ի նորին հնգետառաներորդից ակնարկում է Բուզանդի 4-րդ դպրությունը՝ շպետք է ճիշտ համարել, քանի որ այդ խոսքը կարող է վերաբերել ոչ թե 4-րդ դպրությանը, այլ ամբողջ Բուզանդի պատմությանը:

Այստեղ անկասկածորեն Արեղյանը սխալվում է, և որ Մալխասյանցի ենթադրությունը միանգամայն ճիշտ է, որովհետեւ իրոք որ Ներսեսի անեծքը, որ Փարպեցին քաղում է, այժմ էլ գտնվում է 4-րդ դպրության 15-րդ գլխում, և որ Փարպեցու ժամանակ մեր վերեռում հիշատակված վերնագիրները չեն եղել, և եթե եղել են էլ, նրանք հետադայում փոխվել են կամ խառնվել նոր վերնագիրների, և հագանորեն, ըստ Փարպեցու տվյալի, Բուզանդի գիրքը ունեցել է՝ առաջին պատմութիւնն, երկրորդ պատմութիւնն, երրորդ պատմութիւնն, չորրորդ պատմութիւնն վերնագիրները. այդ է ասում ընդհանուր «պատմութիւնք» վերնագիրը, և այդ է ասում № 3073 ձեռագրի «խոստաբանութիւն» պատմութեան կանոնք ժամանակագիր մատենից», որ տրված է որպես 6-րդ դպրության վերնագիր, և որ տաղագրությունը չունի: Իսկ «խոստաբանութիւն պատմութեանց» և «կանոնք ժամանակագիր մատենից» ունեն միևնույն նշանակությունը, որ է պարզաբնակ պատմություն:

Արեղյանի հիշյալ կարծիքը միայն մի փաստարկումով, այն, որ Փարպեցին Բուզանդի գըմածքը չի կոչում «երկրորդ պատմութիւն» Ագաթանգեղոսի պատմությունից հետո, այլ՝ երկրորդ գիրք, ժխտվում է Բուզանդի ներկա աշխարհաբար թարգմանության առաջաբանի 26-րդ էջում:

Անցնելով թարգմանության մի շարք հարցերին՝ պետք է

ասենք, որ ներկա աշխարհաբար թարգմանությունը կատարված է այնպիսի մի մարդու ձեռքով, որ 52 տարի առաջ հմտւտ կերպով քննել է և լուծել Բուղանդի Հայոց պատմության վերաբերյալ մի շարք վիճելի հարցեր։ Ոչ միայն Բուղանդի, այլև Խորենացու, Սեբեոսի, Ասողիկի և ուրիշ շատ պատմիչների ու գրողների վերաբերյալ Մալխասյանցի ուսումնասիրությունները թանկագին ավանդ են մեր հին գրականության, բանասիրության, մեր անցյալի կուլտուրայի պատմության համար, և դեռ երկար ժամանակ նրանք կպահեն իրենց գրականագիտական ու բանասիրական արժեքը՝ որպես փաստարկումներով հարուստ, հմտորեն կատարված ունալ ուսումնասիրություններ։

Ահա հանգուցյալ գիտնականը իր տպագրված գրքերին ավելացնում է նաև այս հմտորեն կատարված թարգմանությունը, որը լույս է տեսնում, ցավոք, ետ-մահու թարգմանչի հրատարակությամբ, առաջարանով, ծանոթություններով հանդերձ, որ վաղուց սպասելի էր և շատ անհրաժեշտ ի միտ առյալ այն հետաքրքրությունը, որ կա Բուղանդի գրքի նկատմամբ մեր հին գրականության պատմությամբ հետաքրքրվողների մեջ։ Այս թարգմանությունը Բուղանդի պատմության 3-րդ տպագրված թարգմանությունն է (առաջինը Փրանսերեն լեզվով կատարել է Էմինը 1867 թ., իսկ երկրորդը՝ գերմաներեն կատարել է Լառերը 1879 թ. (տես ներկա թարգմանության առաջարանը, էջ 76—77), որ ավելի հաջող է և կատարյալ, քան մյուս թարգմանությունները։

Որոնք են այս թարգմանության առավելությունները. առաջին առավելությունը պետք է համարել այն մի շարք ուղղումները, որոնք կատարվել են թե թարգմանչի կողմից և թե ուրիշների և որ առաջ է բերված ուղղված թարգմանությունը։ Այսպես օրինակ՝ ընագրի «Երամոյեաց ի դահնե միոցէ ի ծովանդը հոսել» ուղղել է՝ «ի գահե միոցէ», որ պետք է ուղիղ համարել նախ իմաստի և հետո քերականական կողմից՝ համեմատած ընագրում եղածի հետ։ Այդպիսի դիպուկ և արդեն բոլորովին ընագրում եղածի սրբագրություն է 3-րդ դպրության ԺԱ. Գլիսի՝ անկասկածելի սրբագրություն է 3-րդ դպրության ԺԱ. Գլուխի՝ փերայ բանակի տեառն աշխարհիս՝ արտահայտության քանի վերայ բանակի տեառն աշխարհիս՝ արտահայտության քանի բառը, որ անպայման պետք է լինի քանակի, որպես և նակի բառը, որ անպայման պետք է լինի քանակի, որպես և սրբագրված է, Բնագրում գրված է (տես 4-րդ դպր. Դ. Գլուխի), չխոնարեն ամենացուն միով միաբանութեամբ զնա ընտրել... չխոնարեն բառը անշուշտ եղել է «խորիել», ինչպես և ուղղված չխոնարեն բառը

է թարգմանության մեջ։ 4-րդ դպրության Ը զլիսի «ուստի կարծիցես բանիցն պատասխանիս պատրաստել» ուղղված է։ «Ուստի կարիցէ...»։ Մեր հիշած № 3079 ձեռագիրը ունի «կարծիցէ», իսկ «կարծիցես» ձեր «կարիցէ» ուղղել է «Արժատականի» հոչակավոր հեղինակը դեռ 1905 թ., բայց այդ սրբագրությանը Մալխասյանցը ծանոթ չի եղել։ Մրա նման և ուրիշ ուղղումներ, որոնք թարգմանիչը հաշվում է մինչև 39-ը, որոնց մասին դեռևս խոսք կլինի։

Երկրորդ առավելությունը այս թարգմանության՝ համեմատած Խորենացու թարգմանության հետ, աշխույժ ժողովրդական աշխարհաբարն է, որ թարգմանիչը պատշաճել է բնագրի լեզվին, որ, ինչպես զիտենք, հեռու է մեր պատմագրության ակադեմիզմից, պատմողական ոճի պրիորներից։ ընդհակառակն՝ այստեղ խոսքի հիմնական որակը մեծ մասամբ երկախոսություններ են, զիմումները, աշխույժ զրույցներն ու հարցադրումները, որոնք խիստ բնական են և կենդանի, և որոնք շատ հաճախ թարգմանիչը հաջող աշխարհաբարի է վերածել։

Երրորդ առավելությունն այն է, որ, կրկին՝ համեմատած Խորենացու թարգմանության հետ, ինկատի առնելով նաև թարգմանչի տեսողության թուլացումը, բացթողումներ համարյաթե չկան (մեր խոսքը դիտումնավոր բացթողումների մասին չէ)։

Չորրորդ առավելությունը, չնայած այն բանին, որ չկարուղանդի քննական հրատարակությունը, իսկ մեր ձեռքում եղած բնագիրը խիստ աղավաղված է, ու շատ արտահպյություններ անհասկանալի, այնուամենայնիվ թարգմանիչը պատվով է դուրս եկել նույնիսկ դժվարամատչելի հատվածների թարգմանությամբ։

Մյուս կարևոր երեսը թը, որ ես ուղում եմ անպայման նշել, դրքի խիստ մատչելի և պարզեցրած առաջարանն է, որ անդ թարգմանիչը սեղմ տողերի մեջ բերել է Բուղանդի մասին եղած համարյա բոլոր թեր և զեմ կարծիքները և այնքան պարզ է շարադրել, քննել, մերժել կամ ընդունել, որ ամեն զրագետ մարդ կարող է կարդալ և Բուղանդի մասին լրիվ գաղափար կազմել՝ առանց դիմելու այդ հողվածների ու զրքերի բնագրերին։ Դրքի տպագրությունը համարյա մաքուր է, եթե չհաշվենք մի քանի աննշան վրիպումներն ու տեխնիկական թերացումները, որոնք անխուսափելի են, մանավանդ որ թարգմանիչը տպագրության ժամանակ մահացած էր։ այդպիսի սխալները

ըրց կարելի է հիշել, օրինակ, 105 էջում տպված «Դարանդաղի», փոխանակ՝ «Դարանաղի». 155-րդ ծանոթագրությունը աղճատվել է ամբողջ մի տող ընկնելու պատճառով. 185-րդ ծանոթության ժեղ ցույց է տրված 109-րդ ծանոթությունը, պիտի լինի 118-րդ. 39 ծանոթությունը ունի՝ բնագրում, պիտի լինի՝ բնագրում. 167 ծանոթությունը՝ քարզմանիղինք: 194-րդ ծանոթությունը ունի «Եվ երբս այս», որ բնագրում չկա և անհասկանալի է: Այդպես խառնվել է 243 էջի մի մեծ պարբերույթ և նման թերառումներ, որոնք սակայն վրիպակների ցանկում չկան:

Նման հրատարակությունից մենք խիստ պահանջներ չենք անում, մանավանդ որ թարգմանիչը հայտնի պատճառներով հնարավորություն չի ունեցել օգտագործել ձեռագիր վավերագիրներ, այլևայլ աշխատություններ ու բնագրական սրբագրություններ, որոնցից ամենամեծը և ամենից կատարյալը՝ ուրախությամբ հիշատակում ենք, մեր ուսուցիչ Հրաչյա Աճառյանի սրբագրություններն են, որոնք մի ամբողջ հոդվածաշարով լույս են տեսել «Բանասերի» 1905—1906 թ. թ. համարներում և որոնք մենք մանրամասն ուսումնասիրել և բաղդատել ենք Բուղանդի և 3079 ձեռագրի հետ և նկատել, որ մեծ մասամբ այդ սրբագրությունները համապատասխանում են ձեռագրի տվյալներին. բայց որոնք, խիստ ցավելով արձանագրում ենք, չին մտել Մալխատսյանցի թարգմանության մեջ:

Հիշենք գրանցից մի քանի կարեռները, որոնք համընկառում են ձեռագրի տվյալներին՝ բաց թողնելով այնպիսիները, որոնք չնայած ձեռագրով չեն հաստատվում, բայց թե քերականորեն և թե իմաստով շատ ուղիղ են և մեր կողմից ընդունելի:

Այսպես օրինակ՝ 3-րդ դպրության 6-րդ գլուխ (Վենետիկի հրատարակություն, 1889 թ.) 15 էջում ունենք. «Եւ արձակեցին ընդ ծովեզեր դաշտին», որ իհարկե ճիշտ չէ. Աճառյանը ուզդել է ընդգծված բառը «ծովեզը». ձեռագիրը ունի «ծովեզերս», որ քերականորեն համապատասխանում է Աճառյանի սրբագրածին. Այդ նույն էջում է գլուխ վերնագիրը ունի. «Յաղագս մեծի պատերազմին հինին եկելոց յարշաւանաց արքային...». «Եկելոց» հոգնակի ձեր ուղղված է «Եկելոյ», որ համապատասխանում է ձեռագրին, միայն լավ կլիներ «յարշաւանաց» բացառական ձեր վերածվեր սեռականի՝ «արշաւանաց», և այն ժամանակ բնագիրը կուղղվեր քերականորեն և կտար ձեռագրի ընթերցվածը ու կդադար հասկանալի: Չորրորդ դպրության ՇԱ գլուխը (էջ 165)

ունի. «Թիկիտ իցե թագաւորին Արշակայ կոռւհլ...» Աճառյանը ուղղել է. «Թէ պէտ իցէ», որ իմաստով ճիշտ է. տպագրի տվյալը անիմաստ է, իսկ ձեռագիրը ունի. «Թի պարտ իցէ», որ իմաստով համընկնում է սրբադրվածին: Էջ 169-ում ունենք. «Բայց բանքն (ձեռագրում՝ բանք) Մարեայ «Երիցոյ ուշ եղեն ինձ», ըստ Աճառյանի ուղղված է. «Բայց բանքն Մարեայ Երիցոյ ուշ եղեն ինձ», որ ճշտորեն համապատասխանում է № 3079 ձեռագրին: Եվ այսպես, բազմաթիվ քերականական, բառական, իժամատային սխալներ սրբագրվել են շատ խնամքով և որոնք պետք էր անպայման հաշվի առնել:

Հենց այստեղից էլ մենք սկսում ենք մեր դիտողությունները ներկա թարգմանության վերաբերյալ. Եթե այս դիտողությունների գեթ մի տասներորդ մասն էլ ուղիղ լինի և նպաստէ Բուզանդի բնագրի վերականգնմանը և ուղիղ թարգմանությանը, կնպաստի նաև պատվարժան գիտնականի հիշատակի սլայծառացմանը, որ այնքան գուրգուրանքով ավելի քան 70 տարի զբաղվեց հայ լեզվաբանության և գրականության մշակությամբ. իսկ եթե այստեղ սխալներ էլ լինեն, զրանք առիթ կտան առավել կարող մեկին նոր ուղղումներ մտցնելու մեր 5-րդ դարի այս հոյակապ հիշատակարանի մեջ, որ այսքան աղափաղված է մեղ հասել:

Մեր դիտողությունները մենք անում ենք մի քանի ստորագրաժանումներով:

Սկսում ենք մեր կողմից ենթագրված սխալ թարգմանություններով. առաջին օրինակը, որ մենք բերում ենք, հետաքրքրական է այն առումով, որ մեր երկու պատկառելի ուսուցիչներին թյուրիմացության մեջ է դցել: 4-րդ դպրության ժը գլխում (Էջ 128) հիշվում է այն զեպքը, թե ինչպես, երբ Արշակը մտնում է պարսից թագավորի ախոռը՝ ձիերը դիտելու, ախոռապետը, տեսնելով Հայոց թագավորին, «ոչ ինչ առ լաւ կալեալ մեծարեաց». Մալխասյանցը այս նախադասությունը թարգմանել է շատ աղատ. «Երբ նա թագավորին տեսավ, իսկ ուշադրություն չդարձրեց, ոչ մի մեծարանք ու պատիվ ցույց չտվեց» (թարգմանություն, Էջ 183): Աճառյանը համարել է աղավաղված և ուղղել է. «ոչ ինչ առ լաւ կալեալ: Բայց այս մի շատ սովորական զրաբարյան նախադասություն է, որ նշանակում է՝ «լվի տեղ ել չղբեց կամ՝ լվի տեղ դնելով՝ չմեծարեց»: Թյուրիմացության պատճառը զուր բառի հոգնակի ձևն է, բայց

այդ գրաբարյան ղարձվածքի «ունել» բայի «առ» նախղիրով խնդիրը միշտ էլ հոգնակի է դրվում, երբ «ունել» նշանակում է՝ «հսկարել»։ Օրինակ՝ Եղնիկը գրում է. «Մարդիկ աշխարհիս զնա (ի նկատի առ որ «զնա» եղակի է) առ աստուածս ունին»։ «Զիւռոս ոչ կալայ երբեք առ աստուածս» (Ագաթանգեղոս՝ § 110)։ Երկու դեպքում էլ «աստուած» բառը հոգնակի է, չնայած իմաստով եղակի է պահանջվում։ (Տես մեր «Գրաբարի հատընտիր», էջ 80, ծանոթ. 40):

Երկրորդ փաստը՝ առաջինին հար և նման։ Հորբորդ ղպրության իթ գլխի վերնագիրը սկսվում է. «Յաղագս Դմաւունդ Վահմականայ, որ իննսուն բիւրուն տապրիկ զօրօքն...» մեզ հետաքրքրողը «տապրիկ» բառն է, որը նույն ձեռվ գտնվում է նաև մեր ձեռագիրներում։ Մենք ենթադրեցինք, որ այդ բառը առաջացել է դրափոխությամբ (ինչպես՝ խստոր տվել է՝ սխտոր, կապերտ տվել է՝ կարպետ) սպատրիկ» բառից, մանավանդ որ նույն ձեռվ մեզ պատահեց հենց նույն № 3079 ձեռագրում (էջ 336)՝ «վասակ» բառը գրված ռվակաս ձեռվ։ Հետո ստուգեցինք մյուս բոլոր ձեռագիրները և վերջապես հիշյալ ձեռագրի ցանկում գտանք ստապրիկ» բառի դիմաց գրված՝ սպատրիկ, որ Աճառյանը ենթադրաբար հսկարում է հատուկ անուն, իսկ Մալխասյանցը դարձրել է «Տապարիստան»։ որ «պարսկական նահանդ էր նախկին Մարաստանում»։ տես թարգմանության ծանոթություն՝ 131։ Առանց կասկածելու ստապրիկ» բառը պետք է դուրս հանել Արմատականից։

5. րդ դպրության ԽԴ գլխի (էջ 262) «զի վաչէ երկրորդն Մանուելի, ձին զուլամբ երթեալ, սպանանէր» նախաղասությունը թարգմանված է. «որովհետեւ վաչեի ձին՝ քթահարելով՝ նրան (վերէր ձգում) սպանում էր» (էջ 290)։ Պետք է թարգմանել՝ «որովհետեւ վաչեն՝ Մանուելի երկրորդը սպանվեց՝ ձին վզի վրա գլորվելով կամ գլխիվայր գալով»։ Եթե բնագիրը չենք ուղղում. «Զվաչէ՝ ղերկրորդն Մանուելի՝ ձին զուլամբ երթեալ սպանանէր», որ կթարգմանվի՝ ձին գլխի՝ ալելի ճիշտ՝ վզի վրա ընկնելով սպանեց վաչեին՝ Մանուելի երկրորդին։

«Ասել» բայից հետո հաճախ «առ» նախղիրով հայցական է դրվում, որ նշանակում է՝ մասին, վերաբերյալ. այսպես հենց նույն էջում (էջ 34) Բուղանդը գրում է. «Թերես և առ այս ազգ միտէր բանն մարգարէական», որ թարգմանված է ուղիղ, բայց հենց նույն տեղում գրված նույն տիպի նախաղասությունը՝

«և ըստ մարդարէական բանին առ նոսա ասելոյ» պետք է թարգա-
մանել՝ «նրանց մասին կամ նրանց վերաբերյալ ասված մար-
դարէական խոսքի համաձայն» և ոչ՝ «ինչպես մարդարէական
խոսքը ասել էր նրանց» (տես թարգմ. էջ 110):

Թվում է, թե պետք է ուղղել Յըրդ դպրության Թ գլխի (էջ 21)
ոոր էր մի ի չորից գահերէց բարձերէց տաճարին արքունից նա-
խադասությունը, որ թարգմանված է՝ «որ արքունական սեղանի
չորս բարձրագույն գահերից մեկն էր գրավում» (տես էջ 99):
Նախ՝ պետք է շտանար» բառը այստեղ հասկանալ՝ տուն, սենյակ,
գահին և ոչ՝ սեղան. Երկրորդ՝ «գահերէց, բարձերէց» միւնույն
նշանակությունն ունեն և չեն նշանակում գահ կամ բարձ, որ
նույնանիշ բառեր են, այլ գահը կամ բարձը գրավող մարդ:
Արքունիքում ըստ գահնամակի նստում էին ոչ միայն սեղանի
շուրջ, այլ ամեն գեպօւմ, երբ հարկավոր էր լինում հավաքվել
թագավորի ժոտ խորհրդակցության կամ այլ հարցերով:

3-րդ դպրության ԺԴ գլուխը (էջ 36) ունի՝ «և ունէր սա
զաստիճան աթոռոյն գլխաւորութեան ի մայր եկեղեցեացն ամե-
նայն Հայաստանեաց». այս նախադասության մեջ տեղի է ունե-
ցել շըջում և դարձել է ոչ լավ հասկանալի, բայց ուշադիր ըն-
թերցողը կնկատի, որ «զատազին» բառը վերաբերում է «զատի-
նան» բառին, իսկ «ի մեծն, նախ» բառերը «եկեղեցի» բառին,
որ դրված է ներդոյական հոլովով. պետք է թարգմանել. «Սա
ուներ Տարոնի գլխավոր աթոռի առաջին աստիճանը ամբողջ
Հայաստանի (ընադրում՝ Հայաստանեաց, գուցե Հայաստանեաց
=թե Հայաստանի և թե հայաստանցիների) մայր եկեղեցինե-
րից մեծ և գլխավոր եկեղեցում». թարգմանված է. «և Տարոնի
մեծ և առաջին եկեղեցու բոլոր Հայաստանի մայր եկեղեցու
աթոռի գլխավոր աստիճանն ունել» (էջ 112):

Կարծում ենք, որ նույն տեղում բերված՝ «որպես ի դարանտ-
ղեաց զաւառին յեկեղեցին Թորգանու պատուին վասն գերեզմա-
նացն հայրապետին Գրիգորի», որտեղ շտեղիքն բառը պետք է
համարել զեղչված և թարգմանել՝ եկեղեցուն կից կամ մոտիկ
տեղերը պատվում են, և ոչ՝ եկեղեցին, որը թե քերականորեն և
թե իմաստով անհարիր է. Նախ՝ քերականորեն «յեկեղեցին» ուղ-
ղական չէ. Երկրորդ՝ եղակի է, իսկ բայց հոգնակի և երրորդ՝
պետք չկար տանլու, թե եկեղեցին հարգվում է. և վերջապես մի
քանի առղ վերեւում խոսվում է այդպիսի այլ տեղերի մասին:
Այդպիս է նաև նույն դպրության ԺԹ գլխի՝ «և էին նոքա յերկ-

Ծին Տարօնոյ յեկեղեցւոջ յաւանին յԱշտիշատա նախադասությունը, որ պետք է թարգմանել՝ «Նրանք զտնվում էին Տարոն երկրում՝ եկեղեցու ավան Աշտիշատում» և ոչ ըստ տպագրված թարգմանության. «Նրանք (մի անգամ) Տարոնի երկրումն էին Աշտիշատ ավանի եկեղեցում»: Նախ՝ փակաղծում դրված «մի անգամ» բառերը ավելորդ են. երկրորդ՝ նրանք եկեղեցում չեն. «Եկեղեցի» բառը ոչ թե դրված է ներդոյական հոլովով, այլ սեռական, իսկ շարունակության մեջ էլ դրված է. «Յայնդեւդ երկոքեան եղբարքն երթեւալք հասանէին»:

5-րդ դպրության Ե գլխի հայտնի «Առ Արշակ քաջ» արտահայտությունը, որ՝ թարգմանված է՝ «քաջ Արշակի համար», կարծում ենք պետք է թարգմանել ուղղակի այսպես՝ «առ, քաջ Արշակ», այսինքն՝ «առ» պետք է հասկանալ ոչ թե նախդիր, այլ «առնում» բայի հրամայականը: Այս թեկուղ երեւմ է այն բանից, որ երբ Շապուհը հասնում է Պարսկաստան, մի այսպիսի արտահայտություն է անում. «Եւ յորժամ զախոյեանսն ընկենուին, համակ ասէին թէ՝ «Առ, Արշակ, և նա չէր ի միջի նոցա» (կետադրությունը մերն է—Վ.Ա.): Այստեղ թարգմանիչը հետեւել է Լառերին, իսկ Լառերն էլ էմինին: «Առ» նախդիրը՝ հայցական հոլովով այդպիսի գործածություն չունի. սակավ պատահում է անորոշ դերբայի հետ և այն էլ մեծ մասամբ «ի» նախդիրի հետ միասին:

Պարզ չէ թարգմանված չորրորդ դպրության ԾԴ գլխի (էջ 171) «...Եւ զկէսն ի նոյն հողն զիւրոյ բնակութեան երկրին թողուլ». թարգմանված է. «Իսկ մյուս կեսը թողնել բնական հողով». այնինչ հարկավոր էր թարգմանել՝ «Իսկ կեսը թողնել յուր բնիկ երկրի նույն հողը»: Նույն տեղում (էջ 172) ունենք այսպիսի մի նախադասություն. «Իսկ ի վերայ բուն գետնոյն յատակին՝ և կայր, ի զղջումն դառնայր»: Այս նախադասությունը մասության մասը ուղղված է՝ «և լայր», կարծում ենք անտեղի է. քանի որ նախադասության իմաստը պարզ է, իսկ քերականորեն միանգամայն ուղիղ կառուցված: Նախադասությունը պիտի կետադրել այսպես. «Ի վերայ բուն գետնոյն յատակին և կայր, ի զղջումն դառնայր», իսկ «և» շաղկապն էլ հասկանալ՝ «և» որ. այն ժամանակ նախադասությունը պարզ հասկանալ «և» որ. այն ժամանակ նախադասությունը պարզ զղջում էր: Այստեղ կարող է առարկություն լինել «և» շաղկապի զղջում էր: Այստեղ կարող է առարկություն լինել «և» շաղկապի զղջում որ»: Այստեղ կարող է առարկություն լինել «և» շաղկապի զղջում որ»:

Նյակ առումներ ունի, որ դժբախտաբար «Հայկաղյանը» չի բերում, այսպես՝ ունենք որպայց նշանակությամբ. կամեցայ սիրել զԱրշակ Արքայ Հայոց, և նա համակ անարդեաց դիս «Բուղ-4-րդ, ԾԴ): «Հայեցայ, և ոչ ոք էր. հայեցաւ և ոչ կոյր մարդ» (Եսայի, ԾԹ, 16): Իսկ մեր բերած նշանակության համար համեմատիր Բուղանդի հետեւյալ նախադասությունը. «Եւ զայտացեալ՝ անդէն բժշկեցաւ» (6-րդ, թ) (հենց որ այս ասացանսիջապես բժշկվեց): Նման մի նախադասություն ոչ թե ուղղված է, այլ դուրս է նետված որպես անհասկանալի. այդ դուրս նետված նախադասությունից երկու տող առաջ (4-րդ, Զ, էջ 94) գտնվող՝ «իսկ մեղ կարեորքն առանց ուրոյն ի մարդկան աղանդէն չիք հնար լինել» թարգմանված է. «ինչ որ մեղ կարեոր է առանց մարդկանց օղնության էլ կարող է ստացվել», որ բոլորովին հակասում է նախադասության իմաստին: Եթե «Աղանդ» բառը ճիշտ է հասել մեղ (խոսքը այստեղի մասին է), ապա այդ պետք է ըստ իմաստի նշանակի ռհասարակություն, իսկ «առանց» և ուրոյն բառերը հոմանիշ բառեր են միևնույն ռառանց նշանակությամբ. ուստի պետք է նախադասությունը թարգմանել-«իսկ մեղ համար կարեոր բաները չեն կարող լինել առանց մարդկանց հասարակության (աղանդի): իմաստն էլ հենց այդ է պահանջում, որովհետեւ շարունակության մեջ՝ «իսկ տէրն կարո՞ր է և առանց կերակրոյ պահել զմեղ» նախադասությունը այդ է ասում:

Այժմ դառնանք բաց թողած նախադասությանը. «տալ մեզ դսովորական ընդունելութիւն ընութեան մահուն, որ չերթաց ուրեք է մարդկանէ, այլ պատճառս միայն առնե զանուն իւր ի վերայ սններկոյք մարմնոյն». Հեթագմտնված վերջին ընդգծված մասը, որ նշանակում է՝ «յուր անունը միայն պատճառ է դարձնում աներեւյթ մարմնի վրա».

4-րդ դալբության Բ գլխի վերնադիրը՝ «Յաղագս շինութեան կարգաց յօրինելոց աշխարհին» արտահայտությունը բոլորովին էլ քաղաքացիական շինարարությանը չի վերաբերում, այլ վարչական, քաղաքական կարգերին, ուստի չպետք է թարգմանվեր՝ «Հայոց աշխարհի շենանալն ու բարեկարգվելը», այլ «Հայաստանի վարչական կարգերի կազմավորման (ավելի ճիշտ՝ վերակազմակերպման) մասին», որովհետև, իթե ի նկատի չունենանք բնագրի բառերն անգամ, որ ճիշտ ու ճիշտ մեր բերած նշանակությունն են տալիս, այնուամենայնիվ այդ գլխե

Ծովանդակությունը վերաբերում է միայն և միայն վարչաձեռ
կազմակերպմանը:

4-րդ դպրության Ը գլխի (էջ 99) «գրեաց թուղթ աղաչա-
նաց Եպիսկոպոսն Եւսեբիոս առ Երիցապետն Բարսեղ և մեծաւ
պաղատանօք որ ինչ վասն պատուին պաշտամանն» թարգման-
ված է՝ «Եւսեբիոս Եպիսկոպոսը աղաչանքի թուղթ գրեց Բար-
սեղ Երիցապետին, որի մեջ արժանավայել պատվով ու մեծ
պաղատանքով խնդրում էր»: «Վասն պատուին պաշտամանն վե-
րաբերում է ոչ թե Եպիսկոպոսին, այլ այն բանին, որին վերա-
բերում է հարցը: Այստեղ՝ «պաշտօն» (սեռ. պաշտաման) նշանա-
կում է՝ կրոն, աստվածաշատություն. ուստի՝ «որ ինչ վասն
պատուին պաշտամանն» նշանակում է՝ ինչ որ վերաբերում է
կրոնի պատվին, կրոնի պատվի համար է:

Մեղ թվում է ուղիղ չի թարգմանված նաև նույն 4-րդ
դպրության ԾԴ գլխի վերնագրի հետեւյալ դարձվածքը. «Եւ Տայր
շնու յԱնուշ բերդն», որ նշանակում է՝ «Նրան բանտարկեց Անուշ
բերդում». այդպիսի մի դարձվածք է նաև նույն դպրության
ԾԹ գլխի «Հարաժան սպանանէին զամենեսեան յամենայն ի
բերդոն, յորս տուեալ իր զնոսա անդ»: Ընդգծված մասը պետք է
թարգմանել. «որոնց մեջ բանտարկել էին նրանք նրանց»: (գրա-
քար եղել է այսպես. «Յորս տուեալ էր նոցտ (սեռական հոլովով
հնթակա տուեալ էր» անցյալ դերբայի համար) զնոսա անդ.¹
առաջին նախադասությունը թարգմանված է. «Արշակին ուղար-
կում է Անուշ բերդը, իսկ երկրորդն՝ «որտեղ տեղավորված էին»,
մանավանդ. վերջինը բոլորովին չի համապատասխանում
քնաղըին»:

«Տալ ի բանտ» կամ «տալ ի բերդ» հատուկ մի գրաբարյան
դարձվածք է, որ նշանակում է՝ բանտարկել: Բացի հիշյալ օրի-
նակներից ի նկատի առ նաև՝ «տուք զդա ի տուն բանտին»
(Բ Մնացորդաց, ԺԸ, 26), «ետուն զնա ի տուն բանտի» (Երեմ.
ԼԵ, 14), «զի ես էի որ ի բանտն տայի» (Գործք, ԻԲ, 19):

Նույն տեղում «կայր կախեալ յերեւոյթ տեսիլ նշանակի»
պետք է մեր կարծիքով թարգմանել՝ «կախված էր որպես մի
հրաշալի տեսաբան»: Նորայրը կասկածով առաջարկում է «նշա-
նակ» բառը փոխել՝ «նշաւակի» (տես Կորիւն Վարդապետ և նո-
րին թարգմանութիւնք, էջ 263), բայց կարծում ենք՝ պետք

¹ Տես մեր «Գրաբարի հատընտիր», էջ 27. ծանոթ. 9:

չկա. այստեղ՝ «տեսիլ» և «նշանակ» բառերը միևնույն իմաստը ունեն, որ նշանակում են՝ տեսարան։ Մնում է այստեղ ռերեսյր բառը, որ մենք թարգմանում ենք «հրաշալի»։ Համեմատիր նույն բուղանդի շՅաճախեց զերեւոյք նշանս իւր և դսքանչելիս (4-րդ, ԺԴ), որ նշանակում է. «շատացրեց իւր հրաշալի հրաշքներն ու սքանչելիքները»։ Որ «երեւոյթ» բառը այստեղ ածական է և ոչ գոյական, երեւում է այն բանից, որ եղակի է դրված. բայց չի նշանակում «երեւացող», ինչպես թարգմանված է՝ նա հաճախեց իր երեւացող նշանն ու սքանչելիքները։

Թվում է, ոչ ճիշտ թարգմանություն է նաև 4-րդ դպրության ԾԴ գլխի (Էջ 170) «ապա թագաւորն Պարսից տաճիկ ուղարձակ արձակէ ի Հայու արս զհողու և զջրոյ, զի եկեսցեն բարձեն նման զիմայսեն։ պարբերության ընդգծված մասը, որ պետք է թարգմանել՝ «որպեսզի գան լուծեն (կամ փորձեն) (բառացի՝ վերացնեն) նրա համար (Շաղուհի) հմայքը, այն գուշակությունը, որ քավդեները արեցին։ Իսկ Մալխանցի թարգմանության մեջ (Էջ 216) կարդում ենք. «որ գնան այդ հմայության նյութերը բերեն»։ Շատ ցավում ենք, որ այստեղ նույնպես հանգուցյալ գիտնականը հետեւել է Լառերին՝ որը հիշալ հախադասությունը ճիշտ այդպես է թարգմանել. Dass sie hingingen und ihm die Zaubermittel brachten. (Lauer, Des Faustus von Byzanz Geschichte Armeniens, Köln. 1879, Էջ 132).

Այստեղ տեղն է հիշել նաև հետեյալ արտահայտությունը, որ ունենք նույն դպրության ԾԵ գլխում (Էջ 175). «իսկ յերկիրն Հայոց ստէպ առաքէին դեսպանս առ տիկին աշխարհին առ Փառանձես, զի ժուժկալ լինիցի բերդին և մի ձեռս տացի ի պարսիկս»։ ընդգծված տողերը թարգմանված են՝ «որ դիմագրէ, բերդը պլաշտպանէ, պարսից ձեռքը չտա» (Էջ 219). սակայն կարծում ենք ճիշտ կլիներ, եթե թարգմանվեր այսպես՝ «որպեսզի աչալուրջ (զգաստ) լինի բերդի նկատմամբ և չհանձնվի պարսիկներին» և ոչ թե բերդը չհանձնի պարսիկներին։ Այստեղ ավելի մոտ է Լառերի թարգմանությունը, որ հաշտվել (sich abfinden) բառով է թարգմանել։ Այսպես էլ՝ «ապշեցոյց չետ յիշել» թարգմանված է «խելք թողեց գլուխս, 22մեցրեց», այնինչ պետք է թարգմանել. «շփոթեցրեց, չիշեցրեց»։ և նա ևս չաբքան դնած։ թարգմանված է՝ «բայց Հոհանը ավելի խիստ ստիպեց», նույն տեղում (Էջ 277). «խաղակատակ լիներ նոցա» թարգմանված է. «նրանց խեղկատակն էր դառնում»։ կարծում ենք

պետք է թարգմանել՝ «Նրանց համար խեղկատակում էր», իսկ շարունակության մեջ «որպէս խաղալովն զանձն իւր կըթէր յագահութեան» թարգմանված է. «Խաղալիկ դառնալով նա ադահության էր ձգտում». այնինչ ոորպէս» բառը այսուղ նշանակում է՝ «օրինակ» (համեմատիր Եղնիկի հետեւյալ նախադասությունը. ռկարծիցի ուժանց, որպէս՝ յունացն հեթանոսաց և արանցն մոգուց և հերձուածողաց). պետք է թարգմանել «Խաղալով» (խեղկատակելով) իրեն (զանձն իւր=իրեն) վարժեցնում էր ագահության մեջ»:

Մի աղավաղված նախադասություն է նաև 3-րդ դպրության ժկլիսի. «օրում անուն Յակոբ փոխանակ ազգաւն պարսիկ կոչեր», որ թարգմանված է՝ «որի անունն էր Հակոբ, Զգոն կոչված, պարսիկ Անակիոբին»: Կարծում ենք այսպիսի ուղղումը, որ դակիս է նորայր Բյուզանդացուց, պետք է բռնազրոսիկ համարել առանց հիմքի: Նախ՝ ասենք, որ Վենետիկյան մի ձեռագիր չունի «փոխանակ աղդաւն պարսիկ» մասը, իսկ եթե ընդունենք, որ այդ կապակցությունը հարադատ է բնագրին, ապա այն մի միջանկյալ արտահայտություն է, որ ընկած է՝ «օրում անուն Յակոբ կոչէր» բռն նախադասության մեջ. կարծում ենք այս ապացուցելու համար հարկ չկա օրինակներ բերել. մնում է «փոխանակ աղդաւ պարսիկ» դարձվածքը. «փոխանակ» բառը ես կարծում եմ պետք է հասկանալ՝ «չնայած», «հակառակ այն բանին» և թարգմանել՝ «չնայած աղդով պարսիկ էր»: Համեմատիր սխալ կետադրության պատճառով սխալ թարգմանված նաև հետեւյալ նախադասությաւնը. «երկու մանգունք միումն Պապ անուն և միւսումն Աթանազինսի, ճանաչէին ստահակը և անխրատք»: Թարգմանված է՝ «մեկի անունը Պապ միւսինը Աթանազինս, ճանաչված էին իրեւ անխրատ ստահակներ», այնինչ պետք էր «Աթանազինս» բարից հետո ստորակետը ջնջել և դնել «ճանաչէին» բայից հետո և ապա թարգմանել:

Պատմական թյուրիմացություններ են առաջանուժ նաև հին տերմինների սխալ թարգմանության պատճառով. այսպես՝ «և զգաւառն ունիքը յոստան թարգմանված է՝ «գալառները Ռատանին միացրեց», և ռոստան» բառն էլ գրված է մեծատառով, որը անհասկանալի է: 118-րդ ծանոթության մեջ «ռոստան» բառը բացատրված է՝ կալվածք, քաղաք և հետո՝ որպես Ռշտունյաց կալվածքը Վանա լճի մոտ: Բայց ես կարծում եմ՝ պետք է ընդունել «ռոստան» բառի Աղոնցի մեկնարանությունը, բայ որի

սկզբնական նշանակությունն է՝ շեմ, դուռ, ապա արքունիք և
 հետո միայն արքունի կալվածք, Բուղանդի մեր բերած նախա-
 դասությունը պետք է հասկանալ՝ «յարքունիս ունել», մեր այս-
 օրվա հասկացողությամբ՝ պետականացնել. ճիշտ երկու տող
 վերև (4-րդ դպրություն, ԺԹ, էջ 133) «զբազմաց տունս
 հատանէր յտրքունիս» «Ոստան» բառի կալված իմաստը ունենք
 5-րդ դպրության ԺՀ գլուխմ, որ մնացել է անթարդմանե-
 լիս. Այստեղ պետք է հիշել նաև հայտնի մի դարձվածք, որ Բու-
 զանդը բաղմաթիվ անդամ գործ է ածել «Եւ ինքեանք կային
 ի հարկի ծառայութեան» (5-րդ, ԺՀ), «Ի հարկի կացուցանէր»
 (նույն տեղ, ԺԷ, ԺԶ, ԺԵ, ԺԴ, ԺԲ, ԺԲ, Թ). որտեղ որ նախա-
 դասությունն է. «Ի հարկի ծառայութեան», որ թարգմանված է՝
 «հարկատու և հպատակ էր դարձնում», իսկ որտեղ սոսկ՝ «ի հար-
 կի կացուցանէր», ապա թարգմանված է՝ «հարկատու էր դարձ-
 նում». թե՛ «ի հարկի ծառայութեան» և թե՞ «ի հարկի կացուցանել»
 պետք է հասկանալ ոչ թե՝ հարկատու, հարկի ենթարկել նշանա-
 կություններով, այլ՝ ծառայեցնել նշանակություններով: Այդ
 արտահայտությունը Բուղանդը վերցրել է Մակարայեցիների
 դրբից (Ա. Մակ, Լ, 10), որի դիմաց հունարենը ունի հայոց
 losanto=ծառայեցնել: Համեմատիր նաև Գ թագաւորաց, Թ, 21.
 ահեւ արկ գնոսա Սողոմոն ընդ հարկօք ծառայութեան մինչեւ
 ցայսօր, (Երեմ, ԻԷ, 9), ոռչ հարկիցէք արքային բարելացւոց։
 Եվ դրա համար մի՞թե ամենալավ օրինակ չէ նույն Երեմիայի
 Լ, 8-ում հետեւյալ արտահայտությունը. «Եւ ոչ ես կայցեն նոքա
 ի հարկի օտարաց, այլ հարկեցին տեսան Աստուծոյ»—ընական
 է որ աստծուն հարկ չպետք է տային, այլ ծառայեին: Երբեմն
 «հարկ» բառի դիմաց Գրքում ունենք ρhoros (տուրք), բայց
 Գրքի մասնագետները նշում են, որ յոթանասնից թարգմանու-
 թյան մեջ այդ բառը ուներ ծանր աշխատանք նշանակությու-
 նը՝ համապատասխան երրայցելեն տաս բառին: Այդպես է
 նաև գմարդահարկ բառը, որ նշանակում է՝ բեգյառի ենթակա,
 բայց ոչ հարկատու. ահս նաև Ղեվոնդ (Շահնաղարյանի հրա-
 տարակություն, էջ 161):

Եվ վերջապես ամենալավ ապացույցը ունի Եղնիկը հետեւ-
 յալ նախադասությամբ. «Մարդն որ անասնոյն տիրէ, թե անա-
 սունն, որ մարդոյն ի հարկի կայ». ընական է, որ անասունը
 մարդուն չի կարող տուրք տալ:

Լեզվական առումով սխալ է թարգմանված նաև 3-րդ

գպրության Ե գլխի՝ «այլ հայրական միտս զծերական հանճառոյն ստացեալ զիսրատն իմաստութեան»։ պետք է թարգմանել՝ «այլ հայրական միտք ծերունական հանճարի տնմահ իմաստուն խրատն ստանալով։ բայց կարդում ենք՝ «այլ հայրական միտք ծերունու հաճճար ստանալով իմաստնացավ դեսի անմահություն ձգտելու։ Թվում է սխալ թարգմանված նաև՝ «ևս ապա եթէ որ գտցի, որ և արասցի ունել զուխտ հաստատութեան հաւատոյ հազիւ հազիւ։ Աճառյանը «արասցէ» բառը ուղղել է կարասցէ, համարյա նույն ձեռով էլ հասկացել է թարգմանիչը՝ թարգմանելով։ «այնպիս որ շատ քչերը կմնան, որ կարողանան հաստատ պահել հավատի ուխտը։ Հիմա տեսնենք սխալը որտեղից է առաջացել։ «Առնեմ բայրը բացի յուր ըուն նշանակությունից նաև գործ է ածվում որպիս օժանդակ բայ և կազմում է պատճառական կերպի բայեր։ օրինակ՝ «արա այսր մտանել», «առնից զմեղ աշխատել» (Փարակեցի), «արա տէր վախճան դադարման առնուլ» (Նարեկ ԼԳ, ԶԵ)։

Այստեղ պատմիչի միտքն այն չէ, որ մեկը հավատ ունենակամ պահի հավատի ուխտը. դրանով ոչ մի բան չէր փոխվի. այլ հեղինակը ուղղում է ասել՝ թե մեկը չի լինի որ պահել տա (ժողովրդին) հավատը, որ չուրանան։ Ուստի «արասցէ» բառը պետք է մնա որպիս ճիշտ բառ և չփոխվի. այլապիս իմաստազրկվում է նախադասությունը։

Սրան ավելացնենք նաև մի քանի մանր դիտողություններ. օրինակ՝ «այլ Յոհան Եպիսկոպոս», որ նշանակում է՝ այլ էր Հոհան Եպիսկոպոսը. բայց թարգմանված է՝ «այս Հոհան Եպիսկոպոսը։ Յ-րդ դալրության Զ վերնագիրն է՝ այլ վասն Դրիգորի եպիսկոպուսին, կարծում ենք պետք է թարգմանել՝ «Դրիգոր Եպիսկոպոսի մասին էլ»։ «Խաղացուցին ի մի վայր ժողովեցին, ի ժամադիր կողմանս յԱյրարատեան գաւառին բանակ մեծ լինէր»։ այս նախադասությունը չի վերաբերում գերիներին, որպիս վերագրել է թարգմանիչը, այլ զանազան կողմերից հավաքվող դուքքին (տես էջ 16, Յ-րդ, է)։

Զանց ենք առնում ուրիշ դիտողություններ և անցնում ենք մի քանի բառերի բացատրություններին։

«Արար» բառը նշանակում է՝ կալվածք, գույք, ինչք, նաև ձեռքի շինվածք, բայց և նշանակում է՝ բերք, արդյունք. «Վայելեալք յիւրաքանչիւր արարս իւր» պետք էր թարգմանել՝ յուրաքանչյուրը վայելում էր յուր աշխատանքի պտուղները,

բայց թարգմանված է՝ «և ըոլորն իրենց բնակության տեղերում վայելում էին խաղաղություն»:

Հայտնի է, որ որոշ կոնկրետ գոյականներ գրաբարում վերացականանում են. օրինակ՝ փոխանակ ասելու՝ աստուած, ասում են՝ աստուածութիւն. այդպիս է՝ «պոռնկությիւն» բառը կարծում ենք սկզբք է հասկանալ՝ «պոռնիկ», և այլ ի պոռնկութենէ եղեալ ես որդի «հարկավոր էր թարգմանել պու պոռնկից ես ծնված» կամ «պոռնկի որդի ես» (Յ-րդ, Լ.է). Օրինակ՝ «շրջէր հոգի աստուածութեան» ի վերայ ջուրց» (Ագաթանգեղանոս). «գովաբանի առ ի նոցանէ սուրբ աստուածութիւնն» (Նարեկ, Ղ.Դ):

«Բաղմական» բառը նշանակում է բարձ, բաղմոց (ոմանք թարգմանում են նաև գորդ). այդ նշանակությամբ հիշյալ բառը Բուզանդը գործ է ածել բազմաթիվ անդամ (ան Յ-րդ, ԺԹ, ի, էջ 53. 4-րդ ԾԴ, էջ 172, (չորս անգամ)). համեմատիր նաև, արկ նմա բազմական» (Յուղիթ ԺԲ, 15): Ամեն տեղ էլ այդ բառը թարգմանված է նստելու տեղ, փոխանակ թարգմանելու՝ բաղմոց կամ ավելի ճիշտ՝ բարձ: Հետաքրքրական է այդ կողմից բերել Յ-րդ դպրության ի դիմի: հետեւյալ նախադասութլունը՝ որ կարծում ենք սխալ է թարգմանված. «Զօրն դարանակալ յանպատրաստից յանկարծօրէն յայլակարծուց զնոսա յանկարծուստ յիւրաքանչիւր բազմականի ի վերայ հասեալք ըմբռնէին», որ պետք էր թարգմանել՝ «Դարանակալ դորքը հանկարծակի վրա հասնելով՝ ըոնում է նրանց հանպատրաստից յուրաքանչյուրին յուր բարձի վրա». խոսքը վերաբերում է նաև թագավորի հետ եղած մարդկանց, որոնց բոլորին էլ բանում են: Թարգմանված է՝ «գարանակալ մարդիկ անսպասելի կերպով հանկարծակի վրա պրծնելով Տիրան թագավորին հենց նստած տեղում բռնեցին»: Այդպիս էլ սխալ պետք է համարել՝ «անկեալ զնէին ի ներքոյ եպիսկոպոսանոցին»՝ տեղւոյն բազմականացն» (Յ-րդ, ԺԹ). թարգմանված է՝ «նրանք եպիսկոպոսանոցում ճաշի սեղանի տակ ընկած մնացին, այնինչ պետք է թարգմանել. «ընկած մնացին բարձերի տեղում»:

Բուզանդի «բազմականութից» բառը պետք է թարգմանել «բարձակից» բառով (ան Յ-րդ, ԺԹ):

«Կարիք» բառը նույնությամբ թողել է. այնինչ նշանակում է (այստեղ) վիշտ, ցալ, սուզ: «Զգնացելոցն կարիս մնացելոցն համարեալ»: Համեմատիր՝ «որչափ ևս առաւել միանգամայն զհրաժարելոցն սաստիկ կարիս մնացելոցն է համարել» (Կորիւն):

«Մերձեսցին աւուրք կարեաց հօր իմոյ» (Ծննդոց իի, 41). հունա-
բենում կարեաց ձեի դիմաց ունենք՝ սուդ:

«Կամակար» բառը նույնպես թողնված է նույնությամբ.
այնինչ «կամակոր» բառը գրաբարում բոլորովին այլ նշանակու-
թյուն ունի քան աշխարհաբարում: «Կամակար» նշանակում է
թյուր, ծուռ, շեղված. համեմատիլ՝ «գնացին ընդ ճանապարհ
կամակոր» (Դատ. Ե, 6). «կամակոր և խեղաթիւր աղգին» (Փիլիպ. Բ. 15): Տես
«Արմատական», Յ-րդ հատ. «կամակոր» բառի բացատրությունը:

«Պողոտա» նշանակում է ճանապարհ. Բուզանդի՝ վասն պո-
ղոտայի նանապարհին արտահայտությունը հավելադրության
ձևով է. թե «պողոտայ» թե «ճանապարհ» միևնույն նշանակու-
թյունն ունեն, բայց թարգմանված է՝ անցուղարձ (տես Յ-րդ, Բ):
Նույն տեղում «միւս ևս կամ ուս միւս» նշանակում է՝ Յ-րդ,
դարձյալ, բայց թարգմանված է՝ մի ուրիշ, այսինքն՝ ածական.
Նույն տեղում «Տանար մոյրի» պետք է թարգմանել՝ անտառ-
տաճար, բայց թողել է նույնությամբ, որ անհասկանալի է: ԺԱ
գլխում (Յ-րդ դպրություն) գրված է՝ «մնացելոցն յանցելոց
դութ և խնամ. կալցին»: Վեհսետիկյան մի ձեռագիր չունի օյան-
ցելոց՝ բառը. չունի նաև մեր № 3079 ձեռագիրը, ուստի
պետք էր դուրս գցել այդ բառը, բայց այն ժամանակ աշխար-
հաբար թարգմանությունը բոլորովին սխալ է դուրս գալիս, որ
է «իսկ ընկածների մնացորդներին գութ և խնամք տանին», այն-
ինչ այստեղ խոսքը վերաբերում է կենդանի մնացածներին և ոչ
ընկածների մնացորդներին: Յ-րդ դպրության ԺԳ գլխում (Էջ 35)
«վարիցեա պետք է թարգմանել՝ «կառավարի»: Թարգմանված է՝
վարվի. «լինել» բայց (Յ-րդ, Ա, Էջ 191) թարգմանված է՝ «հա-
մարձակ» և այն էլ այնպիսի տեղ, որտեղ գրված է՝ «լինեա
յարձակեցաւ». 163 ծանոթության մեջ գրված է՝ «որովհետեւ գործ
է ածված հարձակվել բայի հետ, մենք թարգմանեցինք համար-
ձակ բառով»: բայց հենց նրա համար, որ գործ է ածվել հարձակ-
վել բայի հետ, ուստի նշանակում է հարձակվել: Գրաբարյան
սովորական դարձվածք է անցյալ դերբայը գործ ածել յուր մի
հոմանիշ դիմավոր բայի հետ: Օրինակ. «վաղվաղակի յարուցեալ
ողջացաւ» (Բուզանդ, Յ-րդ, Թ): անցեալ զնաց, խողացեալ երթայր,
քակտեալ քայֆային, հեռացեալ մեկնեցան, յաճախեալ բազմանաց
(տես Զալլիսյան-Այտընյան, «Քերականություն Հայկաղյան լեզ-

վիճ, էջ 434 և մեր «Թրաբարի հատընտիր», էջ 40, ծանոթություն 17):

Բացի այս այդ բառը Աճառյանը «Արմատականում» բերել է որպես Ալաշկերտի բարբառի բառ «հարձակվել» նշանակությամբ, Այս բայցը «լինել» ձևով շատ սովորական գործածական բառ է իմ մայրենի խոսվածքում (Կոտայքի շրջան, Ելղովան գյուղ), որ նշանակում է հարձակվել, արագ թափով միանգամից վրա վաղել. օրինակ՝ «հընչի ես լքնում էրեխու վրեն. շունը լքնեց վրես»:

«Զանազան» բառը, որ հոմանիշ է պեղեցիկ բառին (քան զայլս գեղեցիկ դանազան, 3-րդ, ի, էջ 50) թարգմանված է՝ դանազանություն է։ «Բարեկիր» նշանակում է՝ հավատարիմ. թարգմանված է՝ բարեմիտ (3-րդ, թ): «Անձնիշան կամօք նշանակում է՝ կամքի աղատությամբ (4-րդ, ե). թողել է նույնությամբ: «Վատախորհուրդ վատանշան» պետք է թարգմանել՝ չարամիտ, վատահամբավ (տիրահոչակ). համեմատիր գրքի հետեւյալ նախադասությունը՝ «Խորհուրդ վատ ի մեջ առին սպանանել զնա»։ Ընդգծված դարձվածքը նշանակում է դավադրություն սարքեցին, չար միտքը հղացան։ Հունարենում այդ դարձվածքի դիմաց ունենք ուշադիր ուշադիր բայլը, որ նշանակում է՝ չար գառնալ, չարությամբ վերաբերել. համեմատիր նաև՝ «Մերուժան վատանշան» (4-րդ, իի). «Եկն եկաց փոխանակ նորա այս Բասիլիդէս վատանուն վատանշան» («Կոչումն ընծայութեան», Վենետիկ, 1832, էջ 104). «Թշնամիք մեր վատախորհուրդ» (Բ Օրէնք. I.Բ. 31):

Դրաբարից աշխարհաբար թարգմանելիս պետք է ուշադրություն դարձվի վերոհիշյալ երեսույթների վրա, որովհետեւ շատ քանի թարգմանիչը կարող է հասկանալ, իսկ աշխարհաբար ընթերցողին համար կարող է անհասկանալի լինել. այսպիս՝ «սատակեցան» (3-րդ, ի) մնացել է նույնությամբ. «Ճետ» (3-րդ, Ժ) պետք էր թարգմանել ժառանգ, մնացել է դարձյալ առանց թարգմանելու։ «Աշխարհ» բառը պետք էր թարգմանել՝ երկիր, խորան՝ ննջարան, սենյակ. «Ռամիկասպաս զօրք» պետք է հասկանալ զյուղացիներից հասարակ մարդկանցից կաղմված բանակ, որ հակագրվում է՝ «պատրիկ զօրք» հասկացողությանը (տես 3-րդ, ի, էջ 52. 4-րդ, իթ, էջ 151): «Աքենացւոց քաղաք» մեղ համար անհասկանալի է. պետք էր թարգմանել կամ զրել՝ Աթենք և ոչ թողնել նույնությամբ. այդպես էլ անհասկանալի է՝ մեռելներ էր հարուցանում:

«Զօրութիւն» նշանակում է նաև՝ ստացվածք. համեմատիք՝ գղորութիւն քո և զամենայն դանձս քո բաշխեցից յաւարի» (Երեմ. ԺԷ, 3). «Եւ աւար առցէ զղորութիւնս քո և կողոպտեսցէ զինչս քո» (Եղեկ. ԻԶ, 12): Աւստի Բուղանդի՝ «այլք կերիցեն զօրութիւնս (ուղղելի՝ զղորութիւնս) ձեր», պետք է թարգմանել՝ «ուրիշները կուտեն ձեր բերքը կամ ձեր ստացվածքը, բայց թողնը վագած է նույնությամբ» (տես Յ-րդ, ԺԴ, էջ 41): Այսպիսի դիտողությունների թիվը կարելի է էլի երկարել, բայց այժմ անցնում ենք Բուղանդի բնագրի նկատմամբ մինչև այժմ եղած մեք քանի ուղղումների քննությանը:

Դեռ շատ վաղուց Բուղանդի բնագիրը ենթարկվել է բազմաթիվ սրբագրությունների՝ սկսած Հայկազյան բառարանից, վերջացրած ներկա թարգմանությամբ:

Մենք սկսում ենք ներկա թարգմանության սրբագրություններից, ըստ որում օգտագործում ենք մեր Մատենադարանի բոլոր ձեռագիրները, կամ ուղղում ենք ըստ մեր հասկացածի:

1. «Երթեալ նորոգեաց անդ զեկեղեցիսն լուսաւոր կարգօք, առաջնոյ Գրիգորի՝ հօրն գործոցն նմանեալ»: Այս նախադասության «հօրն» բառը ուղղված է՝ «հաւուն» և թարգմանված է՝ «պապի», որ հետեւթյուն է Ե. Մ.-ի: Ե. Մ-ն չի հասկացել պետք է «կարգօք» բառից հետո ստորակետը ջնջել և կարգալ «...կարգօք առաջնոյն Գրիգորի, հօրն գործոցն նմանեալ»:

2. «Ձկնատեսանք» կամ «ձկնատեանք» (Յ-րդ, Ը և Գ-րդ, ԻԲ), որ համարված է աղվաղված բառ և անհասկանալի, պետք է կարծել, որ առաջացել է «ձկնատեանք» բառից, իսկ «հա-ի անկումով՝ ձկնատեանք», որ սխալ գրությամբ տվել է ձկնատեսանք:

3. «Որում անուն էր յանուն հօր իւրոյ Արտաւազդ». «Հօր» բառը նախորդի նման սրբագրված է՝ «հաւուն» և թարգմանված է՝ իր պապի անունով: Փոխելու պետք չկա. շփոթությունը առաջացել է «իւրոյ» դերանվան պատճառով, որ այստեղ նշանակում է ոչ թե՝ «իւր», այլ՝ «նորա» և վերաբերում է Վաչեին: Գրաբարում հաճախ՝ «իւր» և «նորա» դերանունները շփոթվում են միմյանց հետ. օրինակ՝ «զի իւրոյ արարչին յառաջազրոյն պատուիրեալ էր նմա» (Եղնիկ), փոխանակ նորա արարչին. «ապայղեաց կոչեաց առ ինքն զայգորդն, աղաչեաց զնտ առնել ի վերայ նորա աղօթս» (փոխանակ իւր) (Բուղ. Յ-րդ, Թ): Համեմատիր նաև՝ «ետես Գողողիա՝ եթէ մեռաւ որդին նորա» (փոխանակ իւր). հրեշտակն երարձ վերացոյց զԱմբակում զվարսից դա-

գաթան իւր (այսինքն՝ նորա): Տես մեր «Գրաբարի հատընտիր», էջ 39, ծան. 11 և էջ 59, ծան. 42): Համեմատիր նաև Բուղանդի հետեւյալ նախադասությունը՝ «Աակայն նորին արեամբն» այսինքն՝ իւր, որ թարգմանված է՝ նոցին (3-րդ, ԺԴ, էջ 40):

4. Բնագրի «կամ զիարդ եղէց բարեխօս վասն այնոցիկ, որք նուանեցինեա». վերջին բառը անհասկանալի է. ուղղված է՝ «ստամբակեցան», որ աշխարհաբարի համար անհասկանալի է և ուղղումն էլ կամայական. կարծում ենք հարկավոր է ուղղել՝ «նուաճնեալ լինին», մանավանդ որ № 3079 ձեռագիրը ունի՝ «նուաճնելինն» (3-րդ, ԺԴ, էջ 22):

5. Չորրորդ դպրության ցանկի (Ե գլուխ) «հանդերձ այլովքն պատարագով» արձակէր յերկիրն Հայոց. սրբագրված է՝ «այլ պատանդների հետ». այսուղ պատանդների մասին խոսք չկա. ձեռագրում ունենք՝ «հանդերձ այլովք պատարագօք», ուստի հոլովական պատճառաբանությունը վերանում է. մնում է մեկնել «այլ» բառը, որ այսուղ անհասկանալի է. բայց վստահությամբ պետք է ասել, որ այդ «այլ» բառը պատկանում է «հանդերձ նախարարօք» դարձվածքին, որ ունենք մի տող վերեւում և որ այն անցել է մտքով մյուս տողը «հանդերձ» բառի գուգուղությամբ. պետք է լիներ՝ «հանդերձ այլովք նախարարօք». և իրոք վերնագիրը ունի՝ «հանդերձ պատարագօք», առանց «այլովք» ձևի (տես էջ 81):

6. Պետք է սխալ համարել նաև Նորայրի ուղղումը, որ է «որպես առ առաջին թագաւորաւքն նուաճնեալք յիւրաքանչիւր չափու»: որ ընագրում է... «առաջին թագաւորքն նուաճնեալք իւրաքանչիւր չափու». իժաստը պարզ է. Արշակը կարգավորում է այնպես, ինչպես նվաճել էին (այսինքն՝ երկար ժամանակի ընթացքում ստեղծել էին հատուկ կարդ ու կանոն.) 1-ին թագավորները (4-րդ, Բ, էջ 67):

7. 4-րդ դպրության ԾԳ գլխի՝ «իբրև տեսին զնոսա արկին զերկոսեանն զարքայն Արշակ և զսպարապետն վասակ, և պահէին զնոսա արձակ ի մէջ ազատագունդ փուշտիպան զօրացն» պարբերույթը համարված է աղավազված: աղավազված չէ, պետք է լիներ՝ «արկին և պահէին զերկոսեանն ի մէջ...» պարզապես անհետեղություն է. այդ մասին տես մեր «Գրաբարի հատընտիր», էջ 16, ծան. 23:

8. 5-րդ դպրության Ե գլուխը Բուղանդի անհասկանալի հատվածներից է: Դժվարությունը մեծ մասամբ աղավազվումնե-

քից է առաջացել և երբեմն էլ տողերի կրկնությունից, այսինքն միենույն բառը կամ երբեմն մի ամբողջ կամ կիսատ նախադասություն կրկնան անդամ է արտագրվում: Օրինակ, նույն գլխի 212 էջի վերեից 5-րդ տողի՝ «թագաւորաց յիշելով զայն մարդ, որ յայն բերդի դոք եղեալ է»: այս ամբողջը չպետք է լինի, ինչպես որ չկա № 3079 ձեռագրում:

Նույն էջի 18-րդ տողի՝ «Երթ տուալ լիցի քեղ, որ ինչ (պետք է լինի՝ զոր ինչ) յինէնս խնդրեցեր փոխանակաց քոց»: (մեր ձեռագրում՝ «փոխանակ քոց և ոչ՝ քեղ»), թարգմանված է՝ «ինչ որ դու ինձանից խնդրեցիր քո ծառայության փոխարեն»: այնինչ այստեղ Շապուհը շեշտում է Դրաստամատի տոհմասիքությունը: վերջին բառերը պետք թարգմանել՝ «քոնոնց համար և ոչ՝ քեղ համար»:

9. 5-րդ դպրության լի գլխի (էջ 239) «կարգեալք պակեալք» արտահայտությունը համարել է աղավաղություն և ուղղել է՝ «կարգեալք պատեալք»: «Պսակել» բառը գրաբարում նշանակում է՝ շրջապատել: դրա համար համեմատիր նույն էջի՝ «պատեալ պատեալին» դարձվածքը: համեմատիր վերեռում բերված «Ակնեալ յարձակեցաւ, յարուցեալ ողջացաւ...» և այլն: Ապա այդ բայը նույն իմաստով ունենք գործածված նաև այլ գրողների մոտ (տես «Նոր Հայկաղյան բառաբան», 2-րդ հատոր, էջ 663, 1-ին սյունակ, 1-ին բառ):

Մի քանի խոսք էլ ուրիշների սրբագրության մասին: 3-րդ դպրության Գր գլխի (էջ 8) «ի կնօջե քագաւորին» ընկ: Աճառյանը կարծում է պետք է ուղղել՝ «ի կնոջէ թագաւորին»: Բայց՝ «կին թագաւոր» մի բառ է և նշանակում է՝ թագուհի: Այդպես էլ՝ կին մարդ, այր մարդ, այր ծառայ, այր թշնամի և այլն: համետատիր Բուղանդի՝ «զի ասեն» թէ զայր եպիսկոպոս դու անիծեր» (6-րդ, թ): (տես մեր «Դրաբարի հատընտիր», էջ 39, ծանոթ. 12):

Նույն դպրության ե գլխի (էջ 11) «և առնելոց եին ի նմանէ հովիւքն գլխաւորք»: ընկ: Աճառյանը ուղղում է՝ «յառնելոց». կարծում ենք պետք չկա ուղղելու: «առնելոց» ձեւ «առնիմ» բայի դերբայն է, իսկ «առնիմ» բայը շատ հաճախ նշանակում է՝ լինել, դառնալ: օրինակ՝ «և յորժամ բանան պատեանքն, յայնժամ առնի նոցա դիւրին թռչել» (Բարսեղ Կեսարացի, Վեցօրեայք): Առնին մահք տարածամք (Եղնիկ): եւ ոչ առայ թէ չառնին ուրախ (Ոսկ. Մեկն. Եսանայ): ամենայն լե-

զու, որ նոյնաբանութեամբ յայլ լեզու թարգմանիցի՝ մթնի առնի¹

«Եւ դտանէին զնոսա լոկ ցամաքեալ ղկճղացեալ զոսկերս նոցա». մեր ձեռագիրը (3079) ունի «զնոսա»-ի փոխարեն՝ զնոցա. եթե ընդունենք որ այս ճիշտ է, ապա նախադասությունը պետք է թարգմանենք՝ «զտան նրանց միայն ցամաքած և կը դղացած» (կճեղ բառից, որի փոփոխակն է ալճեղ) ոսկորները», բայց այն ժամանակ վերջին «զնոցա» բառի և «ղկճղացեալ» բառի զն մնում է անհասկանալի, ուստի պետք է թարգմանել՝ դտան նրանց լոկ ցամաքած և նրանց կճղացած ոսկորները: Աճառյանի ղկճղանալ որպես սաստկական բայ անընդունելի է (տես «Զեռագրական սրբագրություններ Փավստոս Բուղանդի միջը, էջ 155):

«Վասն ճիշտ միոյ կարծիս առնել զայն ամբոխ խռովութեան ի մոլեկան առնէն Շապուհ վարագայն»: Աճառյանը ջնջում է «կարծիս» բառը, բայց այն ժամանակ «զայն» հայցականը ոչ մոլեկան առնէն» բացառական ներդործող խնդրի հետ չի համապատասխանում և նախադասությունը իմաստաղբեկվում է:

Ճիշտ է, նման անհետեղություններ Բուղանդը մի քանի տեղ ունի, բայց դրանք մեծ մասամբ ուղղվում են. համեմատիր. «և առաքեալ զվարդանն զմեծ նահապետն յարքայեն Արշակայ»: Խնդիրը հայցական է և երկու բառի վրա էլ «զ» է դրված, ուստի այդ չի կարող սխալ լինել. մնում է «յարտայեն Արշակայ»: № 3079 ձեռագիրը ունի «Արքայեն Արշակայ», որտեղ «արքայեն» բառի «է»-ն հենց այդ ձեռագրում շատ նման է «ի»-ն և հաճախ չենք տարբերում այդ երկու տառերը. ուստի պետք է անսկայման ուղղել՝ տրքային, որ միանգամայն ճիշտ կլինի: Այժմ դառնանք վերեկի նախադասությանը. «կարծիս բառի «ս»-ն ավելորդ է և լսելիքի սխալ, կամ ա-ից առաջ պատահաբար հանդես եկած՝ իսկ «զայն» պետք է ուղղել՝ այն, և այն ժամանակ կստանաք մի կանոնավոր նախադասություն՝ «վասն ճիշտ միոյ կարծի առնել այն ամբոխ խռովութեան ի մոլեկան առնէ Շապուհ վարագայն», որ կթարգմանի՝ «մի ճիշտ համար է համարվում արված կամ եղած այն պատերազմը՝ ստոր Շապուհ վարագի կողմից» (Տես 4-րդ, իԱ, էջ 57):

¹ Օրինակները քաղում ենք մեր «Գրաբարի հատրնտիր», էջ 63, ծանոթություն 28, և էջ 118, ծանոթություն 42:

5. «Զիւրաքանչիւր զօրս բաժանեալ յամենայն կողմանց սահմանացն Հայոց սահմանապահն կացուցանէր». ընդգծված բառերը Աճառյանը ուղղում է՝ յամենայն կողմանս. բայց ճիշտ կլինի կարդալ այսպես. «զիւրաքանչիւր զօրս բաժանեալ, ամենայն կողմանց սահմանացն Հայոց սահմանապահն կացուցանէր». այսպես է նաև № 3079 ձեռագիրը (Բուզանդ, 4-րդ, Բ, էջ 67):

6. 4-րդ դպրության Գ (էջ 71) և այսօր տարապարտուց սիրէք դուք զիս տարապարտ, և վաղիւ... սա պետք է կարդալ՝ «այսօր տարապարտուց սիրէք դուք զիս, տարապարտ և վաղիւ ատելի» և թշնամի:

7. «Եւ գերեղարձ առնէր զզորս ահիւ քարոզութեան փառացն քրիստոսի զկէս, և զայլս գնովք փրկանօք ազատէր» ուղղում ենք. «գերեղարձ առնէր զորս ահիւ քարոզութեան փառացն քրիստոսի, զկէս գնովք, և զայլս փրկանօք ազատէր», (4-րդ, Դ, էջ 78):

8. 4-րդ դպրության Ե գլխի՝ «կաշառակուրծ» բառը № 3079 ձեռագրում գրված է՝ «կաշառակուրս», դուցե պետք է կարդալ՝ կաշառակուրս. իսկ նույն տեղում՝ «կաշառակիկս» բառը նորայրը, ապա Աճառյանը ուղղել են՝ «կաշառարեկս»:

9. Զի փիլիսոփայական արուեստիւն խնոյր արկանէր հանապազ զամենայն զուր բացեալ զբերանս հերետիկոսացն. Նորայրը յուր «Հայկական բառաքննության» մեջ (էջ 60) տարկանիր ուղղում է՝ «առականէր». № 3079 ձեռագիրը ունի՝ «արկան»:

10. «Որչափ ի մատաղութեանն հասակին ըստ աստուածային իմաստութեանն դնացեալ լինէր, նոյնչափ յաւագութեանն ի լիուրյան շաղաշատութեան հատաւ». ընդգծված բառերը ըստ ձեռագրի ուղղել՝ «ի լկտութեան ի շաղաշտութեան». համեմատիր Շաղաշուտ խօսք» (Բուզ., 6, Ը):

11. «Ո գիտէ, զկնի նորա նմա հնար լիցի յափշտակել»: Ուղղել «զկնի» բառը՝ «Զկնին» ըստ ձեռագրի (№ 3079), (4-րդ, ԺԴ, էջ 119):

12. 4-րդ, ԺԶ, վերնագիրը. «կամ զիարդ վասակ Մամիկոնեան սպարապետն Հայոց սպանանէր զսրակալ ասպաստանին արքային Պարսից»: Ընդգծված բառը Աճառյանը ուղղում է՝ «Ճիշտակալ»: № 3079 ձեռագրի ցանկը ունի «զօրակալն», որ երկու անդամ է զրել. մի տեղ շփոթվել Յ բառ առաջ է զրել, ապա ջնջել է (լույս տեսանելի), իսկ հետո զրել է յուր տեղում: № 4584

ձեռագիրը վերնագիրները չունի, իսկ ցանկում ունենք՝ «զօրակալն»: Պետք է ընդունել «զօրակալ» ձեր «պետ» նշանակությամբ և ոչ անպայման «զորապետ», ինչպես որ «ժաղաքարմ» բառը ոչ թե նշանակում է «քաղաքի պատ», այլ «պարփակ» առհանարակ: (Տես Բուդ. Յ-րդ, Պ):

13. 5-րդ դալրության Ա. գլխի վերնագիրն է. «Յաղագս քաւորելոյ Պապայ յերկրին Յունաց, և զալոյ ի Հայս և յինքն ունելոյ զաշխարհի իւր և կամ որ ինչ միանգամ զործեաց և յաջողեցաւ նմա»: Ինչպես տեսնում ենք, համարյա անմիտ է այս վերնագիրը. այսպես էլ աշխարհաբար է թարգմանված: «Պապի թագավորելը հունաց աշխարհում և Հայաստան գալն ու աշխարհին տիրելը....»

Ուղղում ենք ըստ № 3079 ձեռագրի՝ «Յաղագս թագաւորելոյ Պապայ, որ կայր յերկրին Յունաց, և դալոյ ի Հայս և յինքն ունելոյ զաշխարհս իւր (բուն ցանկում և իքն առնելոյ դաշխարհն հօր իւրոյ Արշակայ և կամ որ մի անդամ) և կամ դոր ինչ ի մի անդամ դործեաց՝ յաջողեցաւ նմա»:

14. 5-րդ դալրության Դ գլխի (Էջ 202)՝ «Եւ ութ հեծելով թույլ ետ նմա վախչել....», ուղղում ենք «Եւ Ընդ հեծեալս....»:

Մենք չենք կարող այստեղ բերել այն բոլոր ճշտումները, որոնք մեր ձեռքի տակ կան, դրանցից հիշեցինք շատ քչերը և այնպիսիները, որոնք ոչ միայն քերականական արժեք են ներկայացնում, այլև կապ ունեն իմաստի հետ, բայց այնպիսի ուղղումներ, որ դուտ քերականական են (ինչպես՝ «ոչ ոք նստի» (Էջ 70) պետք է լինի՝ «ոչ ոք նստցի», «ի բաց խզեալ», պետք է լինի՝ «ի բաց խզել». «որ նոցա կարող լինել», «որ նոցա «կարող լինէլ» էջ 71: «Կոչեցի զերիցունս եկեղեցոյն» պետք է լինի՝ «եկեղեցեաց» (Էջ 169). նույն տեղում՝ «զի նոյն աւետարտնն ածէ», պետք է լինի «ածցէ»: «Եթէ կայ յուխտի քո և պահէ զդաշինս քո....» փոխանակ՝ «պահեսցէ»: Եվ շատ ու շատ նման բառեր ու ձեեր, որոնք խիստ կերպով ազդել են Բուզանդի բնաւորի վրա և շատ տեղեր դարձրել անհասկանալի:

Մի քանի խոսք էլ բացթողումների մասին: Նախ դիտավորյալ բացթողումները: 5-րդ դալրության Դ գլխի 201 էջ վերեկց 5-րդ տողից մինչև 202 էջի 4-րդ տողը. ուղիղ մի էջ վերեկց 4-րդ դալրության Ե գլխի 83 էջի XIII տողից մինչև 88 էջի 2-րդ տողը՝ մոտավորապես հինգ էջ՝ ներսեսի քարոզը, նման բացթողումներ մեր կարծիքով չչպետք է լինեին: Բուզանդը


առաջին անդամ է թարգմանվում. պետք էր լրիվ բնագիրը բացահայտել:

Հիշենք նաև աչքից փախած լացթողութները, որոնք, ճիշտ է, շատ անդամ բան չեն փոխում, բայց չպետք է տեղի ունենային: Այսպես օրինակ՝ 3-րդ, Գ (էջ 7) «Զօր» տօնին», նույն տեղ (էջ 31) «սպանումն», «ի գայթակղի» (էջ 47) և այլն:

Թարգմանության լեզվի մասին խռովիս ասացինք, որ համեմատաբար լավ է թարգմանված և հետևել է Բուղանդի խաղացկուն ոճին. բայց բայերի ժամանակները երրեմն խանգարում են թեթևությանը: Այսպես, գրաբարի պատմական ժամանակը մեծ մասամբ անցյալ անկատարն է, իսկ աշխարհաբարում կամ ներկա, կամ կատարյալ, իսկ թարգմանության մեջ մեծ մասամբ պահպան է անցյալ անկատարը, որ առաջացնում է անորոշություն և մեռցնում է կենդանությունը, մանավանդ եթե դրան ավելացնենք այնպիսի բառերի գործածություն, որոնք կամ թունդ քարբառային են և կամ խիստ գրաբարյան, որ մնացել են չթարգմանված, կամ բոլորովին նոր գործածված բառեր են, կամ թիված: Օրինակ միջենան (էջ 120), սերահատվել (էջ 96), մերի (անտառ, էջ 96), գահավեժ (որպես գոյական), քաջարանց (105), հետել—(էտել) (302), հյուծել (գուցե տառասխալ)—հյուսել, խրեցք (251), մռութները կախել (172, 217) պետք է թարգմանել «ուռեց փքվեց», «զետին կոխել», փոխանակ «զետին տանել» (էջ 218): Ղակիշ քաշել—(բանակել) համեմատիր Ղակիշ (կամ լակիշ) ածեալ յամուր տեղւոց» (Բուզ. 4-րդ, ԼԶ, ԽԳ, ԽԸ): Ի միջի նորա ածեալ ղակիշ՝ բանակէին» (Փարպեցի):

«Հարված էր իրեն» (ծան. 29), փոխանակ՝ «հարած» էր, «Աչառություն» և այլն:

Այս դիտողությունները բնավ էլ չեն իջեցնում հանգուցյալ գիտնականի թարգմանության արժեքը, և մենք հավակնություն չունենք կարծելու, թե մեր բոլոր դիտողությունները անսխալ են և առարկություն չեն ընդունում: Սրանք միայն կարող են պատճառ դառնալ առավել ունակների համար, որոնք կարող են ոչ միայն մեր դիտողությունները ճշտել, այլև շատ ու շատ հարցեր, որ մենք բաց թողինք նորանոր փաստեր հավաքելու համար, կը ննվեն ու կլուծվեն «ի շահ և յօպուտ» մեր մայրենի գրականության ու բանասիրության, սովետական նոր հայագիտության տեսանկյունով:



ԳԱԱ Հիմնարար գիտ. գրադ.



FL0081037

[2n-]

ЦЕНА

Из-изу

385